## Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 15)**

21 հոկտեմբերի 2011թ. ժամը $15^{00}$

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագրի մասին:
(Արմեն Իսրայելյան)

3. «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարություն» ծրագրի մասին:
(Դավիթ Մկոյան)

4. «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2 փուլ):
(Հովհաննես Չիտչյան)

### 5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

5.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելմանկենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.4 Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.5 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):



5.6 Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.7 «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին:

### 6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետության դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր 1):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա և 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետության դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»):

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա և 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետության դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» N 1):

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

6.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ N 1):

6.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ N 2):

6.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 7-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ):

**7. Այլ հարցեր**

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-809-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի N Մ-318-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ):

7.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-807-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Գավառի մանկատուն» ՊՈԱԿ):

7.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-905-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպություն) :

7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-841-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն):

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2011 թվականի N Մ - - Ա** Մ-15/1
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N 01/ -11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N 03/07-1/ -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի -ի N -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1261577 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2011 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված N ՀՀ-Կ-16/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 1261577 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

---

Մ-15/1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«13» հոկտեմբերի 2011թ.

**« ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մեկ դասարանը և ուսուցչանոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ Չարենցավան քաղաք, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.261.577,00 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ հոկտեմբերի 12-ից մինչեւ 2011թ. դեկտեմբերի 30-ը |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի թվով մեկ դասարանի և ուսուցչանոցի համար ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.261.577,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինա Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.10.11 №3/3.8-1/86137

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.10.11թ. N 15/15.1/16810-11 գրության՝ <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <<ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

մր. 15/1

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ grigor.mouradian@justice.am

6613-11
20.10.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 14-ի 15/15.1/16810-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/31502-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, ՀեռТел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, e-mail: headofstaff@edu.am, www.edu.am

մր. 15/1

N 04/07.1/12043-11 "20" 10 2011

2011թ.

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 14-ի № 15/15.1/16810-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝ **Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

031/3478-11

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ձր. 15/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Կ44/3-4/1394-11
18.10.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.10.2011թ. թիվ 15/15.1/16810-11 գրությանը կից ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/31133-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** ձր. 15/1
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

18.10.11 N 01/14.2/3956-11
Ձեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին հասցեագրած 14.10.2011թ. N 15/15.1/16810-11 գրության, մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը՝ <Հայաստան> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող <Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում> ծրագիրը բարեգործական որակելու մասին:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

կատարող՝ Վ.Հունանյան
/0223/ 2-67-85

115/31170-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

ԼՂ-15/2

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂ-ՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N 3/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող՝ 82107846 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ֆինանսավորմամբ ձեռք բերված գյուղտեխնիկան ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) հացահատիկային չորանոց՝ 52 տեղ, 11470 կգ ընդհանուր քաշով, 131000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն.

2) հացահատիկի չորանոցի կառուցման համար անհրաժեշտ սարքեր՝ 53 տեղ, 18650 կգ ընդհանուր քաշով, 1957313 ռուսական ռուբլի արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից
Վ. Բաղդասարյան «07» հոկտեմբերի 2011թ.

**«Աջակցություն ԼՂՀ կարիքավոր հողօգտագործողներին»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել ԼՂՀ հողօգտագործողներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններով |
| 3. | Բարեգործը | ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ,<br>ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40,<br>ՀՎՀՀ 90023094 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ,<br>ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40,<br>ՀՎՀՀ 90023094 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ Ասկերանի շրջան, գյուղ Խրամորթ, ոլորտը՝ գյուղատնտեսություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 51 882 031 ՀՀ դրամ և 30 225 815 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ հողօգտագործողները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 5 տարի՝ 2011թ.-ից մինչև 2016թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Adakurutma 2103» մոդելի հատիկի չորանոց՝ 51 882 031 ՀՀ դրամ և ուկրաինական «Բուդմոնտաժ Կոլոս» կազմակերպությունից ստացված չորանոցի սարքավորումներ՝ 30 225 815 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Adakurutma 2103» մոդելի հատիկի չորանոց՝ 51 882 031 ՀՀ դրամ և ուկրաինական «Բուդմոնտաժ Կոլոս» կազմակերպությունից ստացված չորանոցի սարքավորումներ՝ 30 225 815 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |

ԼՂ-15/2

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է հիմնադրամի վերահսկողության բաժնի կողմից և սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

դր.15/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

դր.15/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.10.11 № 3/3.8-2/86111-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 14.10.2011թ. 3/3.8-2/86068-11 գրության հայտնում ենք, որ Ձեր 11.10.2011թ. N15/15.1/16586-11 գրությամբ ներկայացված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք վերախմբագրել ներկայացված որոշման նախագծի 2.1) և 2.2) ենթակետերը՝ ներմուծված 131,000 ԱՄՆ դոլար և 1,957,313 ռուսական ռուբլի բեռների ընդհանուր արժեքների մեջ ներառելով նաև կից փաստաթղթերում նշված համապատասխանաբար 3,985,81 ՀՀ դրամ և 6,053,000 ՀՀ դրամ արժողությամբ փոխադրման ծախսերը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/31105-11

Կատ. Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԽՄ 15/2

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

6542-11
18.10.11

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 11-ի
15/15.1/16586-11 թվակիր հանձնարարականի

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝ Գ. Մուրադյան

035/31/25-11

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԽՄ 15/2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԿԱ/3-6/7233-11
11.10.11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 11-ի համար 15/15.1/16586-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044Բ0475-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 17.10.11, N 3/3.8-2/86111-11 | |
| 1. Առաջարկում ենք վերախմբագրել ներկայացված որոշման նախագծի 2.1) և 2.2) ենթակետերը՝ ներմուծված 131,000 ԱՄՆ դոլար և 1,957,313 ռուսական ռուբլի բեռների ընդհանուր արժեքների մեջ ներառելով նաև կից փաստաթղթերում նշված համապատասխանաբար 3,985,81 ՀՀ դրամ և 6,053,000 ՀՀ դրամ արժողությամբ փոխադրման ծախսերը | 1. Նշված արժեքները ներառում են բեռնափոխադրման ծախսերը |

Դր.15/2

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

Դր.15/3

## «ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի -ի N և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի հոկտեմբերի -ի N, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01573197) իրականացվող՝ 309054905 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 02562304) 2011 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված թիվ 11-2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա հիմքով աթոռների վարձակալում՝ 420000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2011 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրքի և գրքի տուփի տպագրություն-պատրաստում՝ 5208125 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543148) 2011 թվականի հուլիսի 9-ին կնքված N 09/07-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երգերի ձայնագրման, տեսահոլովակների նկարահանման, գովազդային վահանակների դիզայնների մշակման և հոլովակների նկարահանման ու պատրաստման աշխատանքներ՝ 40000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՌՈՒՄԷԱ» գայթակղիչ ճամփորդությունների ակումբ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00087689) 2011 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N 02/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերում՝ 5268000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Աստղիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների ձեռք բերում՝ 1330000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Պարադիզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02506858) 2011 թվականի օգոստոսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական բնութագրով տպագրական ծառայությունների ձեռք բերում՝ 10999786 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Ինվիտրո Ցենտր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01841093) 2011 թվականի հուլիսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 20-ամյակի տարեդարձին նվիրված տոնակատարության հետ կապված միջոցառումների կազմակերպչական, նկարահանման,լուսաբանման, ճարտարապետական-դիզայներական աշխատանքներ, ինչպես նաև տեխնիկայի ապահովման, անվտանգության ու այլ ծառայությունների ձեռք բերում՝ 235000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Շիրակ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504277) 2011 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերում՝ 7760000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Պրոֆեշնլ ինվեսթմենթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00047112) 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերում՝ 3069000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով



Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

տնօրեն՝ ՆՈՐԱՅՐ ՆԱԶԱՐՅԱՆ

«17» հոկտեմբերի 2011թ.

# «ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարություն» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված տոնական միջոցառումներ, մասնավորապես հանրապետության հրապարակում տոնակատարությանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ ՀՎՀՀ 01573197, հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 1 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ ՀՎՀՀ 01573197, հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 1 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ մարզեր: Բնագավառը՝ մշակութային: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ֆինանսավորումը իրականացվելու է «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և հովանավորների կողմից: Ծրագրի բյուջեն կազմում է 309.054.905 (երեք հարյուր ինը միլիոն հիսունչորս հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման ժամկետն է «18» հուլիսի 2011թ-ից մինչև «30» հոկտեմբեր 2011թ-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կնքվել է երգերի ձայնագրման, տեսահոլովակների նկարահանման և պոստ փրոդաքշն ծառայությունների 09.07.2011թ-ի պայմանագիրը «Շարմ հոլդինգ» ՍՊԸ-ի հետ 40 000 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>2. Կնքվել է ալբոմի տպագրության ծառայությունների համար 15.09.11թ-ի պայմանագիրը «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ 5 208 125 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>3. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման 05.09.2011թ-ի պայմանագիրը «Շիրակ» ՍՊԸ-ի հետ 7 760 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>4. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման 01.09.2011թ-ի պայմանագիրը «Պրոֆեշնլ ինվեստմենտ» ՍՊԸ-ի հետ 3 069 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>5. Կնքվել է տպագրության ծառայությունների ձեռք բերման 23.08.2011թ պայմանագիրը «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ 1 330 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>6. Կնքվել է դիզայներական և բնորոշ ոճի ձևավորման ծառայությունների ձեռք բերման 25.08.2011թ-ի պայմանագիրը «Պարադիզ» ՍՊԸ-ի հետ 10 999 780 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>7. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման 10.09.2011թ-ի պայմանագիրը «Ռումէա» Գայթակղիչ ձեռնարկությունների ակումբ ՍՊԸ-ի հետ 5 268 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>8. Կնքվել է կազմակերպչական աշխատանքների, տեխնիկայի ապահովման, անվտանգության հսկողության և այլ ծառայությունների ձեռք բերման համար 25.07.2011թ-ի պայմանագիրը «Ինվիտրո Ցենտր» ՍՊԸ-ի հետ 235 000 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: |

| | | |
|---|---|---|
| | | կնքվել է պայմանագիր աքոռների վարձակալության համար «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամ-ի հետ 420 000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կնքվել է երգերի ձայնագրման, տեսահոլովակների նկարահանման և պոստ փրոդաքշն ծառայությունների 09.07.2011թ-ի պայմանագիրը «Շարմ հոլդինգ» ՍՊԸ-ի հետ 40 000 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>2. Կնքվել է ալբոմի տպագրության ծառայությունների համար 15.09.11թ-ի պայմանագիրը «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ 5 208 125 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>3. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման 05.09.2011թ-ի պայմանագիրը «Շիրակ» ՍՊԸ-ի հետ 7 760 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>4. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման 01.09.2011թ-ի պայմանագիրը «Պրոֆեշնլ ինվեստմենտ» ՍՊԸ-ի հետ 3 069 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>5. Կնքվել է տպագրության ծառայությունների ձեռք բերման 23.08.2011թ պայմանագիրը «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ 1 330 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>6. Կնքվել է դիզայներական և բնորոշ ոճի ձևավորման ծառայությունների ձեռք բերման 25.08.2011թ-ի պայմանագիրը «Պարադիզ» ՍՊԸ-ի հետ 10 999 780 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>7. Կնքվել է հյուրանոցային ծառայությունների ձեռք բերման [illegible].09.2011թ-ի պայմանագիրը «Ռումէա» Գայթակղիչ ձեռնարկատիրությունների ակումբ ՍՊԸ-ի հետ 5 268 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>8. Կնքվել է կազմակերպչական աշխատանքների, տեխնիկայի ապահովման, անվտանգության հսկողության |



| | | |
|---|---|---|
| | | և այլ ծառայությունների ձեռք բերման համար 25.07.2011թ-ի պայմանագիրը «Ինվիտրո Ցենտր» ՍՊԸ-ի հետ 235 000 000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:<br>9. Կնքվել է պայմանագիր աքոռների վարձակալության համար «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամ-ի հետ 420 000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ մշակույթի նախարարություն, Երևանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով հաշվետվություն ներկայացնելը: |

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

**«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՏԵՆԱ-ԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈ-ՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2- ՓՈՒԼ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N 03/07.1/ -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է .***

1. Բարեգործական որակել «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում»՝ 740450000 դրամ արժողությամբ ծրագիրը (2-փուլ) (կցվում է):

2. «Մատենադարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
"Մատենադարան" հիմնադրամի
Գործադիր տնօրեն
Չիբյան
_____ հոկտեմբերի 2011 թ.

# ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցման աշխատանքների Ծրագիր ( 2 -րդ փուլ)

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Մատենադարանի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցման աշխատանքների իրականացում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից |
| 3 | Բարեգործը | "Մատենադարան " հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային հողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02705657) |
| 4 | Ծրագրի կատարողը | "Մատենադարան " հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային հողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02705657) |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 53, ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ |
| 6 | Ծրագրի բյուջեն | 740 450 000 / յոթ հարյուր քառասուն միլիոն չորս հարյուր հիսուն հազար դրամ/ 2-րդ փուլ |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.10. 2011թ. - 31.12.2011թ. |

| | | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
|---|---|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Հեղինակային հսկողություն և տեխնիկական վերահսկողություն (տող 1 + տող 2) | 5 100 000 | |
| | | 2. Շինարարական և ինժեներական համակարգերի աշխատանքներ (տող 3 + տող 4) | 454 920 000 | |
| | | 3. Շինարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում | 227 800 000 | |
| | | 4. Շինարարական և այլ ապրանքների ձեռք բերում | 40 800 000 | |
| | | 5. Կազմակերպչական ծախսեր | 11 830 000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 740 450 000 | |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ | ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ |
| | | 1. Հեղինակային հսկողություն (հոկտեմբեր - դեկտեմբեր 2011թ.) | 2 190 000 | "Սեսյան Արքիտեքտ" ՍՊԸ |
| | | 2. Տեխնիկական վերահսկողություն (հոկտեմբեր - դեկտեմբեր 2011թ.) | 2 910 000 | «ՄԻՇԸ-ք.Երևան» ՍՊԸ |
| | | 3. Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ | 324 620 000 | |
| | | 3.1 հողային և քանդման աշխատանքներ | 36 500 000 | 1.«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ<br>2.«Բազալտ -ԷՄ» ՍՊԸ |
| | | 3.2 երկաթբետոն, երեսապատ սալիկներ, հատակի, առաստաղի, պատերի, միջնահարկերի և աստիճանավանդակների աշխատանքներ, արտաքին կոյուղի և ջրամատակարարում | 197 330 000 | 1.«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ<br>2.«Բազալտ -ԷՄ» ՍՊԸ |
| | | 3.3 դռներ և պատուհաններ | 84 240 000 | 1.«Եվրոստան-Ռյուտ» ՍՊԸ<br>2.«Վուդկրաֆտ» ՍՊԸ |
| | | 3.4 տանիքի և այլ աշխատանքներ | 6 550 000 | «Գիզա» ՍՊԸ |
| | | 4. Ինժեներական համակարգերի աշխատանքներ, այդ թվում՝ | 130 300 000 | |
| | | 4.1 հովացման. ջեռուցման, օդի կարգավորման համակարգեր | 57 000 000 | «Մաստեր-Կլիմա» ՍՊԸ |
| | | 4.2 էլեկտրատեխնիկական աշխատանքներ | 30 000 000 | |
| | | 4.3 անվտանգության, հեռահաղորդակցության, հրդեհամարման համակարգի աշխատանքներ | 30 000 000 | «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ |
| | | 4.4 սառը և տաք ջրամատակարարման, ներքին ջրահեռացման աշխատանքներ | 10 500 000 | «Հատուկմոնտաժմոնտաժ» ՓԲԸ |
| | | 4.5 վերելակների մոնտաժման աշխատանքներ | 2 800 000 | «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «ՅՈՒԳԼԻՖՏ» ԴՈՒՍՏՐ ՍՊԸ |
| | | 5. Ներմուծում, այդ թվում՝ | 227 800 000 | |
| | | 5.1 մարմար, կերամոգրանիտ, գիպսաստվարաթղթե սալիկներ, տանիքի ապրանքներ | 57 800 000 | |
| | | 5.2 հովացման, ջեռուցման, օդափոխության համակարգեր | 78 000 000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5.3 էլեկտրական ապրանքներ | 46 000 000 | |
| | | 5.4 անվտանգության, հեռահաղորդակցության, հրդեհամարման համակարգեր | 27 000 000 | |
| | | 5.6 վերելակներ | 19 000 000 | |
| | | 6. Ձեռք բերում, այդ թվում՝ | 40 800 000 | |
| | | 6.1 շին. ապրանքներ, բազալտ, տրավերտին, տուֆ, ցեմենտ, ավազ, պեմզաբլոկ, դռներ և այլն | 40 800 000 | |
| | | 7. Կազմակերպչական ծախսեր | 11 830 000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 740 450 000 | |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. աշխատավարձ և սոց. վճարներ | 6 240 000 | «Մատենադարան» հիմնադրամ |
| | | 2. գրասենյակային ծախսեր, այդ թվում բանկային և մաքսային ծախսեր | 2 640 000 | |
| | | 3. պահանորդային ծախսեր | 1 200 000 | |
| | | 4. այլ ծախսեր | 1 750 000 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 11 830 000 | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն | | |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման արդյունքները համաձայն-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին | | |

Գլխ. հաշվապահ [signature] Դ.Վարդանյան

դր. 15/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

դր. 15/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.10.11 №3/3.8-1/8613-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.10.11թ. N 15/15.1/16737-11 գրության՝ կապված <<Մատենադարան>> Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

[signature]

Ատոմ Ջանջուղազյան

024/3/222-11

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** ԴՐ-15/4

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

*0078 Երևան, Հալաբյան 41 "ա", հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

6605-11
19.10.11

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 12-ի
15/15.1/16737-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/31367-11

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ. 380-227**

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
**HEAD OF STAFF**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, ՀեռТел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, mail: headofstaff@edu.am, www.edu.am

ԴՐ-15/4

N 04/07-1/12006-11 "19" 10 2011

2011թ.

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 12-ի № 15/15.1/16737-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-փուլ)» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքով՝** **Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

031/31378-11

*կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՐ-15/4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԽԱ/3-4/7397-11
18.10.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.1/16737-11 գրությանը կից ներկայացված «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

ՍՀՎ/31137-11

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ - - Ա** ԱՐ-15/5.1

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-2/86095-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N ՀՔ/22/9455-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/7298-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (14 տեղ, 5322 կգ ընդհանուր քաշով, 425238.48 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6214 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ար.15/5.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.10.11թ. № 3/3.8-2/86095-

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.10.2011թ. N15/15.6/16719-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

17.10.11թ.
№ 034/31048-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

Ար.15/5.1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.10.11թ. N ՀՔ/22/9455-11

Ձեր N ______________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.6/16719-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Oct 17 2011 10:48 AM

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող Ա.Մկրտչյան*
*հեռախոս 52 27 21*

17.10.11թ.
№ 020/30966-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Հր.15/5.1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

13. 10. 11թ.
№ ԱՂԱ/3-6/7298-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 12-ի համար 15/15.6/16719-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

13. 10. 11թ.
№ 044/30753-11

---

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Հր.15/5.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-2/86094-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N ՀՔ/22/9453-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/7300-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (50 տեղ, 677.3 կգ ընդհանուր քաշով, 607646 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1951.28 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՁՐ. 15/5.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.10.11թ. №3/3.8-2/86034-.

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. N15/15.6/16717-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա.Ջանջ. (ստորագրություն)

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

17.10.11թ.

№ 034/31050-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՁՐ. 15/5.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.10.11թ. N ՀՂ/22/9453-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.6/16717-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին(1)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ (ստորագրություն) Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Oct 17 2011 10:47 AM

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

17.10.11թ.

№ 020/30968-11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ա-15/5.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

13.10.11թ.

№ ՀՀ/3-6/7300-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 12-ի համար 15/15.6/16717-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

13.10.11թ.

№ 044/30757-11

<u>*ՆԱԽԱԳԻԾ*</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ - -Ա** ա-15/5.3

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-2/86074-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N ՀՔ/22/9454-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԱ/3-6/7240-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «American Type Culture Collection» ոչ առևտրային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Բարձր ախտածին թռչնագրիպի համաճարակի հակազդեցության ազգային ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (2 տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 7352 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 285.9 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ձր. 15/5.3


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


17.10.11թ № 3/3.8-2/86074-.

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.10.2011թ. N15/15.6/16572-11 գրությամբ ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

17. 10. 11թ.

№ 034/30982-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

ձր. 15/5.3


Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am


17.10.11թ N ՀՊ/22/9454-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.10.2011թ. թիվ 15/15.6/16572-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին»Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Oct 17 2011 10:45 AM

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Վ.Գրիգորյան
հեռախոս 52 27 21

17.10.11թ.

№ 020/30967-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Մ-15/5.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

11.10.11թ.
№ ԱԱԽ/3-6/7240-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 11-ի համար 15/15.6/16572-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

11.10.11թ.
№ 044/30482-11

---

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2011 թվականի N Մ- -Ա** Մ-15/5.4
**քաղ. Երևան**

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-2/ -11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի -ի N ՀՔ/22/ -11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայ օգնության միության կենտրոնական վարչության կողմից Հայ օգնության միության հասցեով ուղարկված բժշկական պարագաների (3 տեղ, 73 կգ ընդհանուր քաշով, 4490 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 562, ցանկը կցվում է, ՄՓԵՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Հայ օգնության միության Ախուրյանի Մոր և մանկան առողջության կենտրոնի համար:

2. Հայ օգնության միությանը՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ար. 15/5.4


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


20.10.11 № 3/3.8-2/86292

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.10.2011թ. N15/15.1/16827-11 գրությամբ ներկայացված «Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/31501-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

Ար. 15/5.4


Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am


20.10.11 N ՀՊ/22/9606-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.10.2011թ. թիվ 15/15.1/16827-11 գրության կապակցությամբ՝ «Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

*Դեղորայքային քաղաքականության բաժին*
*Կատարող՝ Ն.Փափախյան*
*հեռախոս 52 27 21*

020/31421-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԱԱ/3-6/7342-11
17.10.11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 14-ի համար 15/15.1/16827-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

30916-11

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

---

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**հոկտեմբերի 2011 թվականի N Մ – - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17–ի N 3/3.8-2/86069-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԱ/3-6/7211-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հնդկաստանի Հանրապետության կառավարության կողմից տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի (3 տեղ, 300 կգ ընդհանուր քաշով, 61500 հնդկական ռուփիին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 98346 հդկական ռուփի, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

## Ցանկ

ԺՐ-15/5.5

Հնդկաստանի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը համաձայն ATPL 007S պայմանագրի ուղարկված համակարգչային սարքավորումների

| հ/հ | Սարքավորումների անվանումը | Ըստ մաքսային ձևակերպման /բրուտտո քաշ՝ կգ / | Քանակը (հատ) |
|---|---|---|---|
| 1. | Մարտկոց անխափան սնուցման սարքի QUANTA 12AL042 | 283 | 15 |
| 2. | Մետաղյա արկղերի մասեր /իրաններ/ մարտկոցների տեղակայման համար | 17 | 2 |

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար՝ Ա. Հայրապետյան

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԺՐ-15/5.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.10.11թ. №3/3.8-2/86065

Ձեր №

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.10.2011թ. N15/15.11/16537-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (1) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

17.10.11թ.

№ 034/30986-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Վր. 15/5.5

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

11. 10. 11թ.
№ ՇՀԽ/3-6/7211-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 10-ի համար 15/15.11/16537-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N 1) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

11. 10. 11թ.
№ 044/30414-11

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**2011 թվականի N Մ- -Ա** Վր. 15/5.6
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N -11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-6/ -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Յոհաննեսբուրգի Վիտվատերսրանդի համալսարանից UNESCO-ի «Ջուրը, որպես քիմիական լուծույթ» ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված 5 դպրոցական փաթեթների և տպագրված նյութերի 5 հավաքածուի (2 տեղ, 27 կգ ընդհանուր քաշով, 674ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 440 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը (բաշխման ցանկը կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


ԱՐ. 15/5.6

17.10.11 № 3/38-2/86073-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.10.2011թ. N15/15.1/16589-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հաացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/30984-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**HEAD OF STAFF**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, ՀեռТел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, Email: headofstaff@edu.am, www.edu.am


ԱՐ. 15/5.6

N 04/07-1/11936-11 " 18 " 10 2011

2011թ.

*ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 11-ի № 15/15.1/16589-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հաացեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքով՝**

**Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

031/31148-11

*կատ. Ն.Սահակյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՐ·15/5.6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՎԱ/3-6/7273-11
13.10.11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 11-ի համար 15/15.1/16589-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/3065-11

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

<u>***ՆԱԽԱԳԻԾ***</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** ԱՐ·15/5.7

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-2/86164-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 04/07-1/12017-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18–ի N ՖԲ/ԱնՄ-5/8350-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/7322-11, Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի հոկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 14–ի N 01/10.1/3303-11, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի –ի N, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 18–ի N 01/13.3/4665-11, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 17–ի N 01/17/4255-11, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 17–ի N 01/5149-11, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 17–ի N 101/104.3/5671-11 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2011 թվականի հոկտեմբերի 17–ի N 01/4510-11 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (149 տեղ, 4984 կգ ընդհանուր քաշով, 71780 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6100 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

Հր. 15/5.7

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզպետարաններ:

Բեռի բաշխման ցանկ

Հր. 15/5.7

| Անվանումը | Քանակը | Արժեքը | Մարզ | Համայնքի անվանումը | Շահառուներ | քանակը ըստ գյուղերի |
|---|---|---|---|---|---|---|
| Հագուստ օգտագործված | 21 արկղ | 11400 ԱՄՆ դոլար | Արարատ | Սիսավան | Սոցիալապես անպահով 11 ընտանիքներ | 5 արկղ |
| | | | Արարատ | Գինեվետ | Սոցիալապես անապահով 5 ընտանիքներ | 3 արկղ |
| | | | Արարատ | Տափերական | Սոցիալապես անապահով 5 ընտանիքներ | 3 արկղ |
| | | | Վայոց Ձոր | Մալիշկա | Սոցիալապես անապահով 11 ընտանիքներ | 5 արկղ |
| | | | Սյունիք | Մեղրի | Սոցիալապես անապահով 7 ընտանիքներ, | 3 արկղ |
| | | | | | Մեղրու Ա. Աղեյանի անվան թիվ 2 միջն. դպրոց | 2 արկղ |
| Մանկական հագուստ | 52 արկղ | 25725 ԱՄՆ դոլար | Արարատ | Տափերական | Սոցիալապես անապահով 20 ընտանիքներ | 9 արկղ |
| | | | Արարատ | Արարատ | Սոցիալապես անապահով 15 Ընտանիքներ | 11 արկղ |
| | | | | | Արարատի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց | 2 արկղ |
| | | | | | Արարատի թիվ 4 հիմնական դպրոց | 2 արկղ |
| | | | Վայոց Ձոր | Մալիշկա | Սոցիալապես անապահով 25 Ընտանիքներ | 11 արկղ |

Հր. 15/5.7

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Սյունիք | Մեղրի | Սոցիալապես անապահով 25 Ընտանիքներ | 11 արկղ |
| | | | Տավուշ | Գոշ | Սոցիալապես անապահով 5 Ընտանիքներ | 1 արկղ |
| | | | | | Գոշի հիմնական դպրոց | 5 արկղ |
| Մարզական սարքավորումներ | 1 հատ | 1450 ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոց | 1 հատ |
| Թղթյա տակդիր | 27 արկղ 1350 հատ | 13200 ԱՄՆ դոլար | Երևան | Երևան | Նորքի տուն – ինտերնատ (Ծեր.) | 5 արկղ 250 հատ |
| | | | | | Երևանի Մտավոր Թերզարգացում ունեցող երեխաների №2 Հատուկ (Օժ.) Դպրոց | 5 արկղ 250 հատ |
| | | | | | Երևանի №11 Հատուկ (Օժանդակ) Դպրոց | 5 արկղ 250 հատ |
| | | | Շիրակ | Գյումրի | Սոցիալապես անապահով 15 Ընտանիքներ | 6 արկղ 300 հատ |
| | | | | | «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ | 6 արկղ 300 հատ |
| Օճառ | 3 արկղ | 1350 ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Սոցիալապես անապահով 15 Ընտանիքներ | 2 արկղ |
| | | | | | Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոց | 1 արկղ |

Հր. 15/5.7

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Փափուկ խաղալիքներ (նոր) | 1 արկղ 52 հատ | 400 ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Սոցիալապես անապահով 11 Ընտանիքներ, | 18 հատ |
| | | | Վայոց Ձոր | Մալիշկա | Սոցիալապես անապահով 13 Ընտանիքներ | 21 հատ |
| | | | Սյունիք | Մեղրի | Սոցիալապես անապահով 7 Ընտանիքներ | 13 հատ |
| Մանկական կոշիկ (նոր) | 12 արկղ 336 զույգ | 5455 ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Սոցիալապես անապահով 20 Ընտանիքներ | 3 արկղ 84 զույգ |
| | | | Վայոց Ձոր | Մալիշկա | Սոցիալապես անապահով 25 Ընտանիքներ | 4 արկղ 112 զույգ |
| | | | Արարատ | Արարատ | Սոցիալապես անապահով 30 Ընտանիքներ, | 5 արկղ 140 զույգ |
| Ուսումնական գրքեր | 27 արկղ | 10425 ԱՄՆ դոլար | Լոռի | Սպիտակ | Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց, | 5 արկղ |
| | | | | | Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց | 5 արկղ |
| | | | | | Սպիտակի թիվ 6 հիմնական դպրոց | 5 արկղ |
| | | | Երևան | Երևան | Բուհերին և հանրակրթական դպրոցներին | 5 արկղ |
| | | | | | Երևանի Պետական Համալսարան | 4 արկղ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հայաստանի Պետական Ճարտարագի-տական Համալսարան | 3 արկղ |
| Աթոռ (Ikea) | 2 արկղ<br>13 հատ | 650<br>ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոց | 13 հատ |
| Սեղան (Ikea) | 1 արկղ<br>2 հատ | 325<br>ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոց | 2 հատ |
| Համակարգիչ<br>Մոնիտոր<br>Ստեղնաշար | 2 արկղ<br>2 հատ<br>2 հատ<br>2 հատ | 1400<br>ԱՄՆ դոլար | Արագածոտն | Թալին | Թալինի թիվ 1 միջնակարգ դպրոց | 2 հատ<br>2 հատ<br>2 հատ |

Տեղերի քանակը 149, քաշը 4984 կգ, 71780 ԱՄՆ դոլար արժեքով, որի ճանապարհածախսը կազմում է 6100 ԱՄՆ դոլար, ընդամենը 77880 ԱՄՆ դոլար: Բաշխումը կատարվելու է արկղերով:

«Սարդարապատ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն

Նախագահ Վ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.10.11թ. № 3/3.8-2/86164-.

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.10.2011թ. N15/15.6/16767-11 գրությամբ ներկայացված «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- նախագծին կից ներկայացված բեռի բաշխման ցանկում նշված բեռների արժեքը (77,910.00 ԱՄՆ դոլար) չի համապատասխանում ներմուծված բեռների ընդհանուր արժեքին (77,880.00 ԱՄՆ դոլար),

- կից ներկայացված գրությամբ, բացառությամբ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի, պարզաբանված չէ բեռի բաշխման ցուցակում նշված Երևան քաղաքին, Արարատի, Տավուշի, Արագածոտնի և Շիրակի մարզերի համայնքներին բեռների հատկացման նպատակը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

19.10.11թ.
№ 034/31240-.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

**HEAD OF STAFF**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, Email: headofstaff@edu.am, www.edu.am

Մ.15/5-7

N 04/07-1/12017-11 «20» հոկտեմբեր 2011թ.

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 13-ի № 15/15.6/16767-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Ներկայացված «Բեռի բաշխման ցանկում» նշված «Ուսումնական գրքեր» տողը պարզաբանվել է «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ գրքերը ունեն պատմական, տնտեսագիտական, փիլիսոփայահոգեբանական բովանդակություն:

**Հարգանքով՝** **Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

20.10.11թ.
№ 031/31453-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ.15/5-7

« 18 » 10 2011 թ. N ՖԿ/Հմեր-5/8350

Ձեր 2011-10-13, 15/15.6/16767-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**Հարգանքներով՝** **Ֆ. Բերիկյան**

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

18.10.11թ.
№ 040/31201-11

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 http://www.mss.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** մր. 15/5.7

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

14.10.11թ.
№ ՆՂՆ/3-6/7322-11

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 13-ի համար 15/15.6/16767-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե ովքեր են հանդիսանում բաշխման ցանկում նշված համայնքների շահառուները և ինչ սկզբունքով են նրանք ընտրվել:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

14.10.11թ.
№ 044/30881-11

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ** մր. 15/5.7

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

14.10.11թ. N 01/10.1/3303-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր- Սիմոնյանին

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ձեր 10.13.2011թ. թիվ 15/15.6/16767-11գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրը առաջարկում ենք որակել բարեգործական:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

Կատարող՝ Վ.Գևորգյան
Հեռ՝ /0232/ 3-32-50

17.10.11թ.
№ 110/30918-

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
## ՄԱՐԶՊԵՏ

ՃԻ. 15/5. 7

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 Հեռ. /374010/ 287401, 2 25 22
Ֆաքս /374010/ 28 18 32

<<18>> 10 2011թ. N 01/13.3/4665-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին ուղղված 13.10.2011թ. № 15/15-6/161767-11 գրությանը հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման <<<<Սարդարապատ>> բարեգործական հասարակական կազմակերպության հացեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին>> որոշման նախագիծը հանգամանորեն քննարկվել է մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներում և արժանացել հավանության:

Ծրագիրը բարեգործական է: Որոշման նախագծին լրացումներ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ [signature] Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ

կատ՝Վ.Իսախանյան
հեռ./0281/2-06-10

18.10.11թ.
№ 118/31149-11

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

## РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
## ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
## ГУБЕРНАТОР

## REPUBLIC OF ARMENIA
## TAVUSH REGION
## GOVERNOR

ՃԻ. 15/5. 7

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս՝ /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.region.am

17.10.11թ.
№ 01/17/4255-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.10.2011թ. թիվ 15/15.6/16767-11 հանձնարարականի՝ “Սարդարապատ” բարեգործական հասարակական կազմակերպության հացեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին” որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում եմ, որ այն քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության:

Ծրագրի վերաբերյալ լրացումներ չունենք:

Հարգանքով՝ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

[signature]

Կատ. Հ.Ավայան
հեռ. /0263/3-62-58

17.10.11թ.
№ 119/31086-11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ձր.15/5-7

«17» 10 2011թ.
N: 01/5149-11

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 13.10.2011թ.
թիվ՝ 15/15.6/16767-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի <Սարդարապատ> բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին> որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ [signature] Ա.ԳԻՐԻՋՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

17.10.11թ.
№ 116/30991-11

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ձր.15/5-7

⊠ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
☎ 4-61-92
Fax 2-28-77

թիվ 101/104.3/5671-11
«17» հոկտեմբեր 2011 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 13.10.2011թ. թիվ 15/15.6/16767-11 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Դրական եմ վերաբերվում ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրին:

ՄԱՐԶՊԵՏ [signature] Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

17.10.11թ.
№ 114/31002-11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

դր. 15/5.7

3301ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

"17" նոյեմբեր 2011թ. № 01/4510-11

Ձեր 13.10.2011թ № 15/15.6/16767-11

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացրած «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Առաջարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված կարգով, նշված ծրագիրը որակել բարեգործական:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.10.11թ.

№ 117/31071-11

Կատարող՝ Ս. Ավետիսյան
Հեռ./0285/ 2-7397

---

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"SARDARAPAT"
CHARITABLE
NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

դր. 15/5.7

"20 "Հոկտեմբեր"2011թ.
006 / ......................

ՀՀ Կառավարությանն առընթեր
Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ
պարոն Ա. Ալավերդյանին

պատճենը՝
ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ալավերդյան,

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-6/7322-11 գրության Ձեզ եմ ներկայացնում ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բեռի բաշխման նոր՝ լրամշակված ցանկը:

«Սարդարապատ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն

Նախագահ Վ. Պողոսյան

2/53

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք շիվ 094/31495
20 » 10 2011թ.

ՀՀ 0012, Երևան, Կոմիտաս 25/5
25/5 Komitas, Yerevan, 0012

tel.: (374 10) 25 27 71,(374 93) 82 18 16
E-mail: vlad_pogosyan@yahoo.com

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"SARDARAPAT"
CHARITABLE
NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

ԱՐ-15/5-7

"20 "Հոկտեմբեր"2011թ.
007 / ......................

ՀՀ ֆինանսների նախարարության
նախարարի տեղակալ
գլխավոր գանձապետ
պարոն Ատոմ Ջանջուղազյանին

պատճենը՝
ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր Սիմոնյանին

Հարգելի պարոն Ջանջուղազյան,

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-2/86164-11 գրության Ձեզ եմ ներկայացնում ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բեռի բաշխման նոր՝ լրամշակված ցանկը:

Հայտնում եմ նաև, որ իմ կողմից վրիպում է եղել, որն էլ իր հերթին հանգեցրել է նախագծին կից ներկայացված բեռի բաշխման ցանկում նշված բեռների արժեքի անհամապատասխանությանը: Նոր լրամշակված ցանկում վրիպումը ևս ուղղվել է:

«Սարդարապատ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն

Նախագահ Վ. Պողոսյան

ՀՀ 0012, Երևան, Կոմիտաս 25/5
25/5 Komitas, Yerevan, 0012

tel.: (374 10) 25 27 71,(374 93) 82 18 16
E-mail: vlad_pogosyan@yahoo.com

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սարդարապատ բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.<br>- նախագծին կից ներկայացված բեռի բաշխման ցանկում նշված բեռների արժեքը (77,910.00 ԱՄՆ դոլար) չի համապատասխանում ներմուծված բեռների ընդհանուր արժեքին (77,880.00 ԱՄՆ դոլար),<br>- կից ներկայացված գրությամբ, բացառությամբ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի, պարզաբանված չէ բեռի բաշխման ցուցակում նշված Երևան քաղաքին, Արարատի, Տավուշի, Արագածոտնի և Շիրակի մարզերի համայնքներին բեռների հատկացման նպատակը: | Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 20-ի գրությամբ N 007 ներկայացրել է պարզաբանում:<br>ԱՐ-15/5-7 |

ՆԱԽԱԳԻԾ

դր. 15/5.7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**---- ------------------ 2011 թվականի N Մ- -Ա** դր. 15/6.1
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԲ/15-1/9304-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/86017-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7402-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00084182) 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N ԾՀԱՊՁԲ-11/15-ԱՆԳՀ-04 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիական նյութերի / բժշկական պարագաների ձեռքբերում՝ 34010000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և անհատույց բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե ովքեր են հանդիսանում բաշխման ցանկում նշված համայնքների շահառուները և ինչ սկզբունքով են նրանք ընտրվել: | Կազմակերպության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 006 գրությամբ ներկայացրել է լրամշակված տարբերակը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Մ-15/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.10.11 №3/3-8-1/86017-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.10.11թ. N 15/15.4/16676-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա (<<Հայաստանի հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Ջի Վի Էս Մեդիմպորտ>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

N034/30812-11
14.10.11թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-15/6.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՀՀ/3-4/17402-11
18.10.11թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.4/16676-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի NՄ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N044/33132-11
18.10.11թ

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ՄՐ-15/6.2

---- -------------- 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ՍՔ/15-1/9308-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/86018-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7390-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա(Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա որոշման խմբագրությամբ) և 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիտեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01222077) 2011 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-11/15-ԱՆԳՀ-05 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիական նյութերի և բժշկական պարագաների ձեռքբերում՝ 1370094 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (128333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներից, 1241761 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներից):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՄՐ-15/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.10.11թ № 3/3.8-1/86018-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.10.11թ. N 15/15.4/16679-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա (<<Հայաստանի հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Մեդիտեք>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

N 034/30813-11
14.10.11թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ՀՐ 15/6.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՀՀ/3-4/7390-11
18.10.11թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.4/16679-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի NՄ-90-Ա և 2010 թվականի մայիսի 3-ի NՄ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N 044/31139-11
18.10.11թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- -------------- 2011 թվականի N Մ- -Ա ՀՐ 15/6.3
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն») (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 11-ի N ՍՔ/15-1/9307-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 14 -ի N 3/3.8-1/68020-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7393-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա որոշման խմբագրությամբ) և 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«էքսպերտցենտր» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02600821) 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-11/15-ԱՆԳՀ-03 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիական նյութերի և բժշկական պարագաների ձեռքբերում՝ 928000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (296800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներից, 631200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներից):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀԻ 15/6.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.10.11թ № 3/3.8-1/86020-11

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.10.11թ. N 15/15.4/16716-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. փետրվարի 18-ի N Մ-90-Ա և 2010թ. մայիսի 3-ի N Մ-228-Ա (<<Հայաստանի հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր>>) որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Էքսպերտացենտր>> ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ որոշման նախագծի 1-ին կետում նշված պայմանագրի ամսաթիվը չի համապատասխանում կցված պայմանագրի ամսաթվին:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

N 034/30808-11
14.10.11թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԻ 15/6.3

N ՀՀ/3-4/7393-11
18.10.11թ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.4/16716-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի NՄ-90-Ա և 2010 թվականի մայիսի 3-ի NՄ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն») (1)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված պայմանագիրը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ պարբերությունում ուղղել պայմանագրի կնքման ամսաթիվը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

N 044/31131-11
18.10.11թ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի N Մ-90-Ա և 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին (Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն») որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ (1)

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| Հայտնում են,որ որոշման նախագծի 1-ին կետում նշված պայմանագրի ամսաթիվը չի համապատասխանում կցված պայմանագրի ամսաթվին: | Նախագծում կատարվել է վրիպակի ուղղում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են. Հիմք ընդունելով կից ներկայացված պայմանագիրը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ պարբերությունում ուղղել պայմանագրի կնքման ամսաթիվը: | Նախագծում կատարվել է վրիպակի ուղղում: |

Մ-15/6.3

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա Մ-15/6.4
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/85164-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N ԱԱ/3-4/6926-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ար-Մոբիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529671) 2011 թվականի օգոստոսի 5-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահնորդային ծառայությունների մատուցում՝ 4220000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ար. 15/6.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.09.11թ. № 3/3.8-1/85164-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.06.11թ. N 15/15.6/15687-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Ար-Մոբիլ>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

28. 09. 11թ.
№ 034/28988-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ար. 15/6.4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

29. 09. 11թ.
№ ՇՀԿ/3-4/6926-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.09.2011թ. թիվ 15/15.6/15687-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի NՄ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Ար-Մոբիլ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի 6.1 կետի համաձայն պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 17-ին, ուստի արդեն իսկ կատարված գործարքի գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված որոշման նախագծի ընդունումը գտնում եմ ոչ նպատակահարմար:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

30. 09. 11թ.
№ 044/29220-11

Սիմոնյան կրթական հիմնադրամ
Simonian educational foundation

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Տեր Սիմոնյան

Ի պատասխան 30.09.2011թ-ի թիվ 15/15.16/16008-11 գրության հայտնում եմ Ձեզ, որ «Ար-Մոբիլ» ՍՊԸ-ի և Սիմոնյան կրթական հիմնադրամի միջև 05.08.2011թ-ին կնքված պահնորդային ծառայությունների մատուցման մասին պայմանագրի շրջանակում Կողմերի միջև դեռևս չի կատարվել վերջնահաշվարկ: Սույն պայմանագրի շրջանակում Սիմոնյան կրթական հիմնադրամը դեռևս չի ստացել ծառայությունների ընդունման որևէ ակտ և չի կատարել որևէ վճարում:

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

Սարգիս Խաչիկյան
17.10.2011

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ... ԲԱԺԻՆ»
Մուտք թիվ 094/31021
«17» 10 2011թ.

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ | |
| «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի NՄ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.<br>Կից ներկայացված «Ար-Մոբիլ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի 6.1 կետի համաձայն պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 17-ին, ուստի արդեն իսկ կատարված գործարքի գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:<br>Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված որոշման նախագծի ընդունումը գտնում եմ ոչ նպատակահարմար: | Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 17-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում: |

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ - - Ա** Ա.15/6.5

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-501-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 3/3.8-1/85730-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N ԱԱ/3-4/7129-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Քոնսարք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862808) 2011 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N 01/11 պայմանագրին կից N 009, N 010, N 011, N 012, N 013, N 014, N 015 հավելվածներով նշված գործարքը, որով նախատեսվում է զբոսայգու շատրվանների վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 5130669 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ա.15/6.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.10.11թ. № 3/3.8-1/85730-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.10.11թ. N 15/15.6/16305-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հուլիսի 1-ի N Մ-501-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Քոնսարք>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

10.10.11թ.
№ 034/30244-11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԺՐ 15/6.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

7.10.11թ
№ ԱԱ/3-4/7129-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.10.2011թ. թիվ 15/15.6/16305-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի ՆՄ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Քոնսարք» ՍՊԸ-ի հետ կնքված N01/11 պայմանագրի 1.4 կետի համաձայն պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 14-ին, ուստի արդեն իսկ կատարված գործարքի գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել: Միաժամանակ հայտնում եմ, որ ներկայացված հավելվածները և դրանց արժեքները պայմանագրում արտացոլված չեն:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված որոշման նախագծի ընդունումը գտնում եմ ոչ նպատակահարմար:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

7.10.11թ
№ 044/30053-11

---

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian educational foundation

ԺՐ 15/6.5

ՀՀ կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պ-ն Ա.Ալավերդյանին
պատճեն
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Ալավերդյան

Ի պատասխան 07.10.2011թ-ի թիվ ԱԱ/3-4/7129-11 գրության հայտնում եմ Ձեզ, որ Քոնսարք ՍՊԸ-ի և Սիմոնյան կրթական հիմնադրամի միջև կնքված թիվ 01/11 պայմանագրի կնքման օրն է 01.07.2011թ-ը, իսկ գործողության ժամկետը՝ 01.07.2011թ-ից մինչև 14.08.2011թ-ը: Կողմերի միջև 08.08.2011թ-ին կնքված թիվ 1 Համաձայնագրի համաձայն պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 31.12.2011թ-ը (Համաձայնագիր 1-ը կցվում է): Ձեզ ներկայացված հավելվածները կնքվել են 14.09.2011թ-ին, որպես լրացուցիչ աշխատանքների փոխադարձ համաձայնություն (թիվ 01/11 պայմանագրի 1.2 կետի համաձայն): Ուստի ելնելով վերոգրյալից նոր հավելվածների արժեքները պայմանագրի հիմնական տեքստում արտացոլված չեն եղել:

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

Մկրտ Լուսափաղյան
10.20[illegible]

2123

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
094/31015
17 10 2011թ.

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

Սիմոնյան կրթական հիմնադրամի և «Քոնսարք» ՍՊ ընկերության միջև 01.07.2011 թվականին կնքված թիվ 01/11 շինարարական աշխատանքների պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

Վր. 15/6.5

ք. Երևան 08.08.2011թ.

Սույն համաձայնագրով Սիմոնյան կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր տնօրեն Մարի-Լու Փափազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Քոնսարք» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, համաձայնության եկան իրենց միջև 01.07.2011 թվականին կնքված թիվ 01/11 շինարարական աշխատանքների պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Պայմանագրի 1.4. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«1.4.Կապալառուն պարտավորվում է Աշխատանքները կատարել հետևյալ ժամկետներում. սկիզբ՝ 01.07.2011թ., և ավարտ՝ 31.12.2011թ.»:*

2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և համարվում է 01.07.2011թ. թիվ 01/11 շինարարական աշխատանքների պայմանագրի անբաժանելի մասը:

| Պատվիրատու՝ | Կապալառու՝ |
|---|---|
| Սիմոնյան կրթական հիմնադրամ | «Քոնսարք» ՍՊ ընկերություն |
| գլխավոր տնօրեն՝ | տնօրեն՝ |
| Մարի-Լու Փափազյան | Արով Հովսեփյան |
| հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 16 | հասցե՝ ք. Երևան, Ջուղայի 3, բն. 31 |
| ՀՎՀՀ 00833235 | ՀՎՀՀ 00862808 |
| h/h 001-046853-051 | h/h 001-111020-001 |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Վր. 15/6.5

20.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանին

*պատճենը՝* ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 17.10.2011թ. գրության, ի լրումն ՀՀ ԿԱ ՊԵԿ 07.10.2011թ. թիվ ԱԱ/3-4/7129-11 գրության, հայտնում եմ.

Ձեր կողմից ներկայացված պարզաբանումների ելնելով՝ լրացուցիչ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

20.10.11թ.

№ 044/31493-1

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**սեպտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

Մ-15/6.6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/85165-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N ԱԱ/3-4/6931-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00407927) 2011 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգում գտնվող ենթակայանի մոնտաժման աշխատանքներ՝ 6216300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ-15/6.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.09.11թ. № 3/3.8-1/85165-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.09.11թ. N 15/15.6/15691-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հուլիսի 22-ի N Մ-565-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Հատուկէլեկտրամոնտաժ>> ԲԲԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

28.09.11թ.
034/28887-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** մր. 15/6.6


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05


29.09.11թ.
№ ԱԱ/3-4/6931-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.09.2011թ. թիվ 15/15.6/15691-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի ՆՄ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Հատուկէլեկտրոմոնտաժ» ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրի 3.4.4 կետի համաձայն մոնտաժային աշխատանքները պետք է կատարվեն 2011 թվականի օգոստոսի 08-ից մինչև հոկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում, իսկ նույն պայմանագրի 8.1 կետի համաձայն պայմանագիրը գործում է մինչև 2011 թվականի օգոստոսի 18-ը: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ, քանի որ եթե պայմանագրով նախատեսված գործարքն ավարտվել է, ապա արդեն իսկ կատարված գործարքի գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

30.09.11թ.
№ 044/29215-11

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian educational foundation

մր. 15/6.6

ՀՀ կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պ-ն Ա.Ալավերդյանին
պատճեն
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Ալավերդյան

Ի պատասխան 29.09.2011թ-ի թիվ ԱԱ/3-4/6931-11 գրության հայտնում եմ Ձեզ, որ «Հատուկէլեկտրոմոնտաժ» ԲԲԸ-ի և Սիմոնյան կրթական հիմնադրամի միջև 08.08.2011թ-ին կնքված կապալի պայմանագրի 8.1 կետում եղել է տեխնիկական սխալ, որի արդյունքում Պայմանագրի գործողության ժամկետների վերաբերյալ առաջացել է հակասություն (8.1 կետի համաձայն պայմանագրի ժամկետը ավարտվում է 2011 թվականի օգոստոսի 18-ին, իսկ 3.4.4 կետի համաձայն պայմանագրի ավարտման ժամկետը 2011թ-ի հոկտեմբերի 10-ն է): Նշված հակասությունը վերացնելու նպատակով 10.10.2011թ-ին Կողմերի միջև կնքվել է Համաձայնագիր 1-ը, որը կցվում է սույն նամակին:

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

Մ... Փափազյան
17.10.2011

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ...
Մուտք թիվ 094/3/018
«17» 10 2011թ.


ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

Սիմոնյան կրթական հիմնադրամի և «Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲ ընկերության միջև 08.08.2011 թվականին կապալի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 10.10.2011թ.

Սույն համաձայնագրով Սիմոնյան կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր տնօրեն Մարի-Լու Փափազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, համաձայնության եկան իրենց միջև 08.08.2011 թվականին կնքված կապալի պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Պայմանագրի 3.4.4. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«1.4. հաստատված և Պատվիրատուի հետ համաձայնեցված նախագծանախահաշվային փաստաթղթերի և մոնտաժային աշխատանքների գրաֆիկի համաձայն, իր ուժերով գործիքներով, մեխանիզմներով, պատշաճ որակով իրականացնել մոնտաժային աշխատանքները 2011թ. օգոստոսի 08-ից մինչև 2011թ. հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում»:*

2. Պայմանագրի 8.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից ստորագրելուց հետո և դադարում է կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունների պատշաճ կատարմամբ»:*

2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և համարվում է 08.08.2011թ. կապալի պայմանագրի անբաժանելի մասը:

| Պատվիրատու՝ | Կապալառու՝ |
|---|---|
| Սիմոնյան կրթական հիմնադրամ | «Հատուկէլեկտրամոնտաժ» ԲԲԸ |
| գլխավոր տնօրեն՝ | գլխավոր տնօրեն՝ |
| Մարի-Լու Փափազյան | Վլադիմիր Եսայան |
| հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 16 | հասցե՝ ք. Երևան, Արցախի 69ա |
| ՀՎՀՀ 00833235 | ՀՎՀՀ 00407927 |
| h/h 001-046853-051 | h/h 001-048032-001 |

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

20.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանին

*պատճենը՝* ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 17.10.2011թ. գրության, ի լրումն ՀՀ ԿԱ ՊԵԿ 29.09.2011թ. թիվ ԱԱ/3-4/6931-11 գրության, հայտնում եմ.

Ձեր կողմից ներկայացված պարզաբանումների ելնելով՝ լրացուցիչ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

20.10.11թ.
№ 044/31507-11

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա ДР. 15/6.7
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 3/3.8-1/85734-11 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի
N ԱԱ/3-4/7234-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան գրասայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էփիջի Լեբս Էյէմ» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00833235) 2011 թվականի հուլիսի 8-ին կնքված՝ պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է գրասայգու հողամասի ենթավարձակալում (մինչև 2014 թվականի հունիսի 30-ը)՝ 87500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ДР. 15/6.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.10.11թ. №3/3.8-1/85734-1

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.10.11թ. N 15/15.6/16353-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հուլիսի 22-ի N Մ-565-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Էփիջի Լեբս Էյէմ>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

10. 10. 11թ.
№ 034/30239-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Ար 15/6.7

11.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ԱԱ/3-4/7234-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.10.2011թ. թիվ 15/15.6/16353-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված պայմանագիրը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ պարբերությունում «Էփիջի Լեբս Էյէմ» ՍՊԸ-ի» բառերից հետո ավելացնել «Հայաստանի մասնաճյուղի» բառերը:

Միաժամանակ՝ կարծում եմ, որ քննարկման կարիք ունի պայմանագրում վարձավճարի գումարային մեծությունը ԱՄՆ դոլարով նշելու հանգամանքը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

11.10.11թ.
№ 044/30476-Ա

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian educational foundation

Ար 15/6.7

ՀՀ կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պ-ն Ա.Ալավերդյանին
պատճեն
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Ալավերդյան

Ի պատասխան 11.10.2011թ-ի թիվ ԱԱ/3-4/7234-11 գրության հայտնում եմ Ձեզ, որ «Արժույթային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն ՀՀ ռեզիդենտ Սիմոնյան կրթական հիմնադրամի և ոչ ռեզիդենտ «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված հողամասի ենթավարձակալության պայմանագրի վարձավճարը ֆիքսվել է ԱՄՆ դոլարով: Վարձավճարի ԱՄՆ դոլարով ֆիքսելը պահանջվել է «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից այն պատճառաբանությամբ, որ նույն հողամասի վարձակալության պայմանագրով, որը կնքվել է ՀՀ կառավարության և «Էփիջի Լէբս Էյէմ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի միջև, նախատեսված վարձավճարը նույնպես ֆիքսված է ԱՄՆ դոլարով:

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

Սիմոն Տեր-Սիմոնյան
11.10.2011

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
094/3/028
17 10 2011 թ.

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

15/6.7

20.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանին

*պատճենը՝* ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 17.10.2011թ. գրության, ի լրումն ՀՀ ԿԱ ՊԵԿ 11.10.2011թ. թիվ ԱԱ/3-4/7234-11 գրության, հայտնում եմ.

Ձեր կողմից ներկայացված պարզաբանումները անհրաժեշտ եմ համարում ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի առաջիկա նիստի քննարկմանը:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

20.10.11թ.
№ 044/31504-11

ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի NՄ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.<br>Հիմք ընդունելով կից ներկայացված պայմանագիրը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ պարբերությունում «Էփիջի Լեբս Էյեմ» ՍՊԸ-ի» բառերից հետո ավելացնել «Հայաստանի մասնաճյուղի» բառերը:<br>Միաժամանակ՝ կարծում եմ, որ քննարկման կարիք ունի պայմանագրում վարձավճարի գումարային մեծությունը ԱՄՆ դոլարով նշելու հանգամանքը: | Որոշման նախագիծը խմբագրվել է: Կազմակերպությունը 2011 թվականի հոկտեմբերի 17-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում: |

15/6.7

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**հոկտեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** ՀՐ 15/6-8

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N2)**

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 10-ի N 3/3.8-1/85731-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 7-ի N ԱԱ/3-4/7130-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քոնսարք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862808) 2011 թվականի հուլիսի 22-ին կնքված՝ N 03/11 պայմանագրին կից N 008, N 009, N 010, N 011, N 012, N 013, N 014 հավելվածներով նշված գործարքը, որով նախատեսվում է զբոսայգու վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 4037203 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ՀՐ 15/6.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.10.11թ. №3/3.8-1/85731-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.10.11թ. N 15/15.6/16307-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հուլիսի 22-ի N Մ-565-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Քոնսարք>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

10.10.11թ.

№ 034/30245-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՐ.15/6.8

7.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ԱԱ/3-4/7130-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.10.2011թ. թիվ 15/15.6/16307-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի ՆՄ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված հավելվածները և դրանց արժեքները «Քոնսարք» ՍՊԸ-ի հետ կնքված N03/11 պայմանագրում արտացոլված չեն: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Որոշման նախագծի ընդունումը նպատակահարմար եմ համարում վերը նշված հարցերի հստակեցման դեպքում:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

7.10.11թ.
№ 044/30054-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՐ.15/6.8

20.10.11թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

Սիմոնյան կրթական հիմնադրամի
տնօրեն Մարի Լու Փափազյանին

*պատճենը՝* ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 17.10.2011թ. գրության, ի լրումն ՀՀ ԿԱ ՊԵԿ 07.10.2011թ. թիվ ԱԱ/3-4/7130-11 գրության, հայտնում եմ.

Ձեր կողմից ներկայացված պարզաբանումներից ելնելով՝ լրացուցիչ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

20.10.11թ.
№ 044/31500-11

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian educational foundation

ԱՐ.15/6.8

ՀՀ կառավարության առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պ-ն Ա.Ալավերդյանին
պատճեն
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Ալավերդյան

Ի պատասխան 07.10.2011թ-ի թիվ ԱԱ/3-4/7130-11 գրության հայտնում եմ Ձեզ, որ Քոնսարք ՍՊԸ-ի և Սիմոնյան կրթական հիմնադրամի միջև կնքված թիվ 03/11 պայմանագրի կնքման օրն է 22.07.2011թ-ը, իսկ Ձեզ ներկայացված հավելվածները կնքվել են 14.09.2011թ-ին, որպես լրացուցիչ աշխատանքների փոխադարձ համաձայնություն (թիվ 03/11 պայմանագրի 1.2 կետի համաձայն): Ուստի ելնելով վերոգրյալից նոր հավելվածների արժեքները պայմանագրի հիմնական տեքստում արտացոլված չեն եղել:

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

[illegible] Փափազյան
17.10.2011

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» REPUBLIC OF ARMENIA YEREVAN SIMONYAN EDUCATIONAL FOUNDATION 01245672

2/25

<< ...ՈՒԹՅՈՒՆ
094/31011
«17» 10 2011թ.


ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413


<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

—— ————— 2011 թվականի N Մ- -Ա ԱՐ.15/6.9

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՆՄ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/86139-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7395-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ - ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունենի զգալի նշանակություն՝

1) «Սօս աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝00051316) 2010 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N 21-10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի (MEA/GF/AUDIT-10/01) իրականացում՝ 3872000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

1) «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝02542882) 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N 21-10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուբրիկանտների մատակարարում (MEA/GF/LUB-11/01)՝ 3390000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՁՐ. 15/6.9

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.10.11թ № 3/3.8-1/86139-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.10.11թ. N 15/15.4/16768-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. հունիսի 7-ի N Մ-318-Ա (<<Առաքելություն Արևելք>> միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի (<<Սոս աուդիտ>> ՍՊԸ-ի և <<Ռիխտեր-Լամբրոն>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարքի) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա.Ջ.

Ատոմ Ջանջուղազյան

N 034/31219-11
18.10.11թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁՐ. 15/6.9

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՀՀ/3-4/7395-11
18.10.11թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.10.2011թ. թիվ 15/15.4/16768-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի ՆՄ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 12.10.2011թ.-ի թիվ 15/15.4/16739-11 գրությամբ ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է փոփոխություններ իրականացնել վերը նշված ծրագրի 10-րդ կետի 1-ին, 4-րդ և 13-րդ ենթակետերում: Այդ փոփոխությունների ընդունման դեպքում՝ կից ներկայացված պայմանագրերով նախատեսված գործարքների իրականացումը չի համապատասխանի ծրագրին, քանի որ ըստ այդ փոփոխությունների՝ ծրագրի իրականացման 2-րդ տարում (2011 թվական) լուբրիկանտի և ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռք բերում նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Ա. Ալավերդյան

Կատարող՝ Անուղղակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652

N 044/31134-11
18.10.11թ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 12.10.2011թ.-ի թիվ 15/15.4/16739-11 գրությամբ ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է փոփոխություններ իրականացնել վերը նշված ծրագրի 10-րդ կետի 1-ին, 4-րդ և 13-րդ ենթակետերում: Այդ փոփոխությունների ընդունման դեպքում՝ կից ներկայացված պայմանագրերով նախատեսված գործարքների իրականացումը չի համապատասխանի ծրագրին, քանի որ ըստ այդ փոփոխությունների՝ ծրագրի իրականացման 2-րդ տարում (2011 թվական) լուրիկանտի և ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռք բերում նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ: | Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում (կցվում է): |
| | |
| | |

Mission East
- values in action

19 հոկտեմբերի, 2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 18 գրության՝ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրը 3 տարվա ծրագիր է և համաձայն դոնոր կազմակերպության կողմից որոշված ժամանակացույցի յուրաքանչյուր ծրագրային տարվա սկիզբ է համարվում հոկտեմբերի 1-ը, իսկ ավարտը՝ սեպտեմբերի 30-ը: Հետևաբար ծրագրի բյուջեի բաժշխումը ըստ տարիների իրականացվել է ըստ այդ սկզբունքի:

Հարգանքով՝

"Առաքելություն Արևելք" ՄՕԿ
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն՝ Րաֆֆի Դուդակյան

Կատարող՝ Վ. Արզաղյան
Հեռ. 524510, ներքին 24

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
N 09/31356
«19» 10 2011թ.

8 Saryan str., apt. 4, Yerevan, 0002, Armenia
Tel.: (+374 10) 52 45 10, 58 55 82, Fax: (+374 10) 54 56 28
E-mail: info@missioneast.am, Web page: www.miseast.org

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստեվ ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշման 1-ին կետում «8097 հատ» բառերը փոխարինել «8993 հատ»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 12-ի համար 15/15.1/16742-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-809-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին «Հայաստան» համահայկական հիմնադրամ» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ՃՊ-15/7.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

19.10.11 № 3/3.8-2/86204-

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. N15/15.1/16742-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-809-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/31317-11

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

---

ՃՊ-15/7.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 809 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 29–ի N 3/3.8-2/85220-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/ 6871-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված պլաստիկ կոշիկների (30 տեղ, 8097 հատ, 3720 կգ ընդհանուր քաշով, 121455 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ բժշկական և սոցիալական հաստատություններին բաշխելու նպատակով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---- ------------- 2011 թվականի N Մ- -Ա Nº 15/7.2

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/86110-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N ՀԳ/22/9444-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-4/7396-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ - ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին, 4-րդ և 13-րդ ենթակետերը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ՝

| | Ապրանքի/ծառայության անվանումը | Նախնակ. 3 տարվա համար | Նախատեսվող գինը, եվրո | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տարի 1 | տարի 2 | տարի 3 | ընդամենը |
| 1. | Պահպանակ | 4,590,750 | 32,431 | - | 89,110 | 121,541 |
| 4. | Լուբրիկանտ | 473,500 | 3,660 | - | 15,280 | 18,940 |
| 13. | Ֆինանսական աուդիտ | 3 | - | - | 36,000 | 36,000 |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Nº 15/7.2


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


18.10.11թ Nº 3/3.8-1/86110-11

Ձեր Nº ____________________

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.10.11թ. N 15/15.4/16739-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. հունիսի 7-ի N Մ-318-Ա (<<Առաքելություն Արևելք>> միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Ջ.

Ատոմ Ջանջուղազյան

N 034/31107-11
18.10.11թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ձր. 15/7.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.10.11 N Հ4/22/9444-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.4/16739-11 գրության կապակցությամբ՝ «Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Oct 14 2011 5:08 PM

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ա.Մկրտչյան
Հեռախոս 52 27 21

N 020/30945-11
17.10.11թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր. 15/7.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N ՀՀԿ/3-4/7396-11
18.10.11թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.10.2011թ. թիվ 15/15.4/16739-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի NՄ-318-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Կատարող՝ Անուղղակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652

N 044/31136-11
18.10.11թ.

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**2011 թվականի N Մ- -Ա** Nr 15/7.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-807-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 2011 թվականի հոկտեմբերի 17-ի N 14-127 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-807-Ա որոշման 1-ին կետում «օգտագործված հագուստի» բառերը փոխարինել «նոր և օգտագործված հագուստի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTSTRY OF LABOUR
AND SOCIAL ISSUES
«GAVAR ORPHANAGE»
SNTO

*ք. ԳԱՎԱՌ ՕԳՈՍՏՈՍԻ - 23-ի փող. 106*
*#106OGOSTOSI 23 str. GAVARTOWN*
*հեռ. tel. (37410) 28-39-19, 0-264) 2 –21– 56, 2-23-50*


*N14-127*

*«17» «Հոկտեմբերի» 2011թ.*

Nr 15/7.3

*ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերը Համակարգող հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան*

*Տեղեկացնում ենք Ձեզ ,որ մաքսային կոմիտեն առարկում է ձևակերպել քաղաքացի Մարիամ Ալբերտի Իգիթյանի նվիրատվությունը, որպես ազատ շրջանառություն՝ պատճառաբանելով , որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ս/թ սեպտեմբերի 30-ի N Մ-807-Ա որոշման կետ 1-ում հագուստի նկարագրության մեջ ,,օգտագործված,, բառի հետ բաց է թողնված ,,նոր,, բառը: Ձեզ ուղղարկված 30.08.2011 թ.-ի թ.14-104 գրությունում բեռի նկարագրության մեջ մենք նշել ենք ,որ նվիրատրվող ապրանքների մի մասը նաև գնապիտակով են,ուստի խնդրում ենք վերանայել որոշումը նաև հաշվի առնելով այս հանգամանքը:*

ՏՆՕՐԵՆ Ն.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2113

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ...
Մուտք. թիվ 040/31087
«17» 10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTSTRY OF LABOUR
AND SOCIAL ISSUES
«GAVAR ORPHANAGE»
SNTO

Հ. 15/7.3

ք. ԳԱՎԱՌ ՕԳՈՍՏՈՍԻ - 23-ի փող. 106
հեռ. tel. (37410) 28-39-19, 0-264) 2 –21– 56, 2-23-50

#106OGOSTOSI 23 str. GAVARTOWN

«30» «Օգոստոսի» 2011թ.

N 14-104

ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերը Համակարգող հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում սույն թվի հուլիսի 25-ին <<Գավառի մանկատուն>> ՊՈԱԿ-ի և ՀՀ քաղաքացի Մարիամ Ալբերտի Իգիթյանի միջև կնքված մանկական հագուստի նվիրաբերության պայմանագիրը :

Համաձայն պայմանագրի 2011թ-ի օգոստոս ամսին քաղ. Մարիամ Իգիթյանը մանկատանը պետք է նվիրաբերի մանկական հագուստ:

Այժմ մանկատանը բնակվում են թվով 3-18 տարեկան 70 երեխա:

Վերը նշված բեռը արդեն գտնվում է Արարատյան մաքսատանը պատկանող <<Մետեքսին Տերմինալ>> ՍՊԸ-ում :

Ներկայացնում եմ բեռի մանրամասն տեղեկատվություն:Հիմնականում օգտագործած ,որոշները նաև գնապիտակով միջին տարիքի երեխաների աշնանային վերնաշապիկներ, դպրոցական կիսաշրջազգեստներ և տաբատներ:Ապրանքի ընդհանուր կշիռը 900 կգ:

Խնդրում եմ թույլ տալ ներմուծված բեռը ձևակերպել ազատ շրջանառություն մաքսային ռեժիմով:

ՏՆՕՐԵՆ՝ Ն.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 040/31092
«17» 10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 807-Ա**
**քաղ. Երևան**

Հ. 15/7.3

**«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84588-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 14-ի N ՖԲ/ԱնՄ-5/7492-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/6481-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մարիամ Ալբերտի Իգիթյանի կողմից «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված օգտագործված հագուստի (900 կգ ընդհանուր քաշով, 198 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 500 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է օգտագործել մանկատան երեխաների կարիքները հոգալու համար:

2. «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2010 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

ԺՐ·15/7.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-905-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության 2010 թվականի հոկտեմբերի 11-ի N 07 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-905-Ա որոշմամբ (2009 թվականի հուլիսի 17-ի N Մ-458-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «2007 թ. նոյեմբերից մինչև 2009թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել «2007 թ. նոյեմբերից մինչև 2013թ. դեկտեմբեր» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:


<ԸՆՏԱՆԻՔ> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ENDANIK" CHARITY NON-GOVERNMENTAL ORGANIZATION


ԺՐ·15/7.4

Թիվ 07
11. 10. 2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգարժան պարոն Տեր-Սիմոնյան.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 28-ի թիվ Մ-905-Ա որոշմամբ բարեգործական որակված, <Ընտանիք> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շինարարական աշխատանքները որոշակի ժամանակով կասեցվել են կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ, քանի որ շինարարության ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է արտերկրի նվիրատվությունների շնորհիվ:
2008թ-ի ընթացքում իրականացրած աշխատանքների շնորհիվ ավարտվեց և շահագործման հանձնվեց 1400 քառ.մ տարածք, որտեղ ՀՀ ԿԳ նախարարության <Ընտանիք> մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը շարունակում է իր գործունեությունը և 2009թ-ի սեպտեմբեր ամսից նույն շենքում գործում է նաև ՀՀ ԿԳՆ <Գյումրու N4 արհեստագործական ուսումնարան> ՊՈԱԿ-ը: 2010 թվականին ավարտվեց նաև բազմաֆունկցիոնալ դահլիճի շինարարական աշխատանքները:
Վերոնշյալ երկու պետական ոչ առևտրային կազմակերպությունների և <Ընտանիք> բարեգործական հասարակական կազմակերպության գործունեության համար կարևոր նշանակություն ունի դեռևս կիսակառույց մասի շինարարական աշխատանքների ավարտը, ուստի խնդրում ենք ծրագրի ժամկետն երկարաձգել ևս երկու տարի ժամանակով (մինչև 2013թ-ի դեկտեմբեր), քանի որ Ֆրանսիայի կառավարությունը հավանության է արժանացրել <Ընտանիք> ԲՀԿ-ի կողմից ներկայացրած ծրագիրը:
Կանխավ շնորհակալություն:
Կից ներկայացվում է՝

1. Հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 28-ի թիվ Մ-905-Ա որոշումը
2. Հանձնաժողովի 2009թ. հուլիսի 17-ի NՄ-458-Ա որոշումը
3. Շինարարական կազմակերպության հետ կնքած համաձայնագիրը ժամկետի երկարացման վերաբերյալ

Հարգանքով՝
Նախագահ Քնարիկ Ահարոնյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք թիվ 094/31046
17/10/2011թ.


Հայաստան,Գյումրի,Անի թաղ. 11փ.5/2
Հեռ./ Ֆաքս (312) 6.64.07, 6.64.08
Բջջային (94) 84.45.02
Էլ-փոստ. k.aharonyan@entanik.am
www. entanik.am

5/2, 11th St., Ani District, Gyumri, Armenia
Tel./Fax ( 312) 6.64.07, 6.64.08
Mobile ( 94) 84.45.02
E-mail: k.aharonyan@entanik.am
www. entanik.am

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Ընտանիք» ԲՀԿ-ի կիսակառույց շենքի շինարարության
ավարտման աշխատանքների ENTE-03 պայմանագրի կետերի
փոփոխության վերաբերյալ

դր.15/7.4

ք.Գյումրի 01 սեպտեմբերի, 2011թ.

«Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որը գործում է կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Պատվիրատու/՝ ի դեմս կազմակերպության խորհրդի անդամ Արթուր Մինասյանի, որը կազմակերպության անունից հանդես է գալիս համաձայն 26.08.2011թ. տրված լիազորագրի, ֆրանսիահայ, ՀՀ Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացի Զաքուես Մաթոսյանը, անձ. AG 0478519, տրված 14.05.2005թ. 002-ի կողմից /այսուհետ՝ Ֆինանսավորող/ և «Շինարար-97» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Կապալառու /ի դեմս նախագահ Հովհաննես Աւարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն եռակողմ համաձայնագիրը հետևյալի մասին.

*1. Համաձայնագրի առարկան*

1.1 15.10.2007թ. կնքված «Ընտանիք» ԲՀԿ-ի կիսակառույց շենքի շինարարության ավարտման աշխատանքների ENTE-03 պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիր/ փոփոխություններ կատարելու մասին:

1.2 Սույն համաձայնագրով՝

Պայմանագրի 2.2 կետի համար շինարարական աշխատանքների կատարման ավարտ սահմանվում է 2013 թ.-ի դեկտեմբերը:

*2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, ստորագրվում և կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Ֆինանսավորող՝
Զաքուես Մաթոսյան

Պատվիրատու՝
«Ընտանիք» ԲՀԿ խորհրդի անդամ՝
Ա.Մինասյան

Կապալառու
«Շինարար-97» ՍՊԸ-ի տնօրեն
Հ. Աւարոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ
28 դեկտեմբերի 2007 թվականի N Ս- 905 -Ս
քաղ. Երևան

«ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի N 3/8-08/1-360-12781, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի N 21-02-07/543, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի N ՔՆ-15/5048, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի N 6/18-2698, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի դեկտեմբերի 10-ի N 7378/2-1 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի նոյեմբերի 5-ի N 1-01/4387 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Թեքեյան 1ա, ՀՎՀՀ՝ 05512969) իրականացվող 150 000 000 դրամ արժողությամբ «Կազմակերպությանը պատկանող կիսակառույց շենքի շինարարության աշխատանքների ավարտ և կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գլխավոր նշանակություն:

1) «Պրոջեքթ ընդ դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, ՀՎՀՀ՝ 04713455) 2007 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված PD/JAC-01/07 TK պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինմոնտաժային աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացում՝ 156000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Պրոջեքթ ընդ դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, ՀՎՀՀ՝ 04713455) 2007 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված PD/JAC-01/07 AS պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում՝ 120000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Շինարար-97» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Տոլստոյի 61, ՀՎՀՀ՝ 05510886) 2007 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված ENTE-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կիսակառույց շենքի շինարարության ավարտման աշխատանքների իրականացում՝ 140 000 000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությանը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կենտրոնի կողմից, ինչպես նաև կենտրոնին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

դր.15/7.4

կազմակերպության կողմից

07.11.2007թ.

# ԾՐԱԳԻՐ

Գյումրու «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կիսակառույց շենքի շինարարության աշխատանքների ավարտ և կահավորում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կազմակերպության առաքելությունն է նպաստել հաշմանդամ, ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների բարոյահոգեբանական բարդույթների հաղթահարմանը, նյութական և բարոյական աջակցությանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, գեղագիտական, հոգևոր և ֆիզիկական դաստիարակության ապահովմանը՝ ազգային արհեստների և արվեստի, օտար լեզուների, համակարգչային և մայրենի լեզուների ուսուցման միջոցով:<br>Երեխաների կրթման, բազմակողմանի զարգացման նպատակով 1991թ. կազմակերպությունը ՀՀ Լուսավորության նախարարության հետ համատեղ հիմնադրել է «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, որի ջերմ տանիքի տակ համախմբվել և անվճար ուսանում են խնամքի և դաստիարակության կարիք ունեցող 5-18 տարեկան 1300 երեխաներ: Ուսուցողական խմբակներում երեխաները սովորում են ըստ իրենց նախասիրությունների, ուսումնական նյութերն ու պարագաները տրամադրվում են անվճար: Ավարտելուց հետո սաները ստանում են կրթության վկայագրեր:<br>1991 թվականից կենտրոնի գործունեությունը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսավորմամբ:<br>Ուսուցումից զատ կազմակերպությունը իրականացրել և իրականացնում է Շիրակի մարզում նյութական և բարոյական աջակցության, ինչպես նաև բազում այլ ծրագրեր հանուն երեխաների և ազգաբնակչության բարօրության:<br>Մշակված են նաև ապագա ծրագրեր՝ ուղղված ինչպես կազմակերպության ընդհանուր գործունեությանը, այնպես էլ Գյումրու վերականգնմանն ու կարիքավոր խավին սոցիալապես աջակցելուն: Կենտրոնը տասնյոթ տարի շարունակ գործում է երկու տարվա համար նախատեսված ժամանակավոր փայտաշեն մանկամսուրում, որը ֆիզիկապես և բարոյապես մաշված է: Խմբասենյակները փոքր են, ոչ հարմարավետ, տարածքը չի բավարարում տարբեր ուսուցողական սարքավորումների տեղադրման և լիարժեք օգտագործման համար: Խմբասենյակները նախատեսված են եղել 6-8 երեխայի համար, սակայն յուրաքանչյուր խմբակում ուսանում են մոտ 15-ը: Կենտրոնում չկա հարմարավետ սպորտային, միջոցառումների դահլիճներ և սանհանգույց: Մասնագիտական և գեղարվեստական հարուստ գրականությունը գրադարան չունենալու պատճառով տեղավորված է մանկամսուրից դուրս գտնվող տնակի մեջ, որտեղ հնարավոր չէ ապահովել գրքերի պահպանումը:<br>Տարիների ընթացքում փայտաշեն պատերը աղեն առանձնացվել են, հատակը որոշ մասերում քայքայված է, որի հետևանքով 2006թ-ի փետրվարին սանհանգույցը լրիվին փլուզվեց:<br>Շիրակի մարզպետարանը, ուսումնասիրելով «Ընտանիք» կենտրոնի տնակային կառույցի անմխիթար վիճակը և կարևորելով «Ընտանիք»-ի գործունեությունը, 04.01.2002 թ. թիվ 01 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի նիստի որոշմամբ նվիրաբերել է կիսակառույց շենք:<br>Նոր շենքում «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը 2000 դեռահասների համար բացի վերոնշյալից նպատակ ունի իրականացնելու հետևյալ ծրագրերը՝<br>1. Դպրոցահասակ երեխաների ինտեգրում հասակակիցների հետ՝ ուսուցանելով համապատասխան արհեստներ, որը կնպաստի լուծել հոգեբանական խնդիրներն ու հետագա զբաղվածության հարցը:<br>2. Ցերեկային, մսուրային երեխաների խնամքի և դաստիարակության կենտրոնի ստեղծում, որի հիմնախնդիրներն են՝<br>• երեխայի հանրակրթական դպրոցում սովորելու հնարավորության ընձեռումը,<br>• շահառու երեխաների հոգեբանական պրոբլեմների լուծումը,<br>• երեխա-ծնող հարաբերությունների վերականգնումը,<br>• առողջության և հիգիենայի պահպանումը,<br>• մասնագիտական ուսուցման և զբաղվածության ապահովումը,<br>• ինտեգրումը հասակակից երեխաների հետ:<br>Շահառուների ընտրությունը կկատարվի համատեղ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:<br>3. Ազգային արհեստների վերականգնում և զարգացում:<br>Նոր շենքը հագեցած կլինի ժամանակակից սարքավորումներով և կստեղծվի բազմաբնույթ աշխատանքների ուսուցումը նպատակային, հետաքրքիր և բովանդակալից անցկացնելու համար:<br>Նոր շենքում նախատեսված է 300 տեղանոց դահլիճ, որը 25000 բնակչություն ունեցող բաղամասի համար կհանդիսանա որպես մշակութային կենտրոն: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | 1.Ջաքուես Մաթոսյան Ֆրանսիահայ, ՀՀ , Գյումրի քաղաքի պատվավոր քաղաքացի<br>Հասցե-Պիեռ Ռոնսար փողոց, 29, 93290 Թրամբլի, Ֆրանսիա<br>անձ. AG 0478519, տրված 20.07.2005թ. 022-ի կողմից<br>2. Ալին Գայաեան՝<br>հասցե-Գարշեն փողոց 43 ա<br>92210 Սեն-Քլուդ, Ֆրանսիա<br>անձ. 04 DH 78516, տրված 26.07.04թ., 92100-ի կողմից |
| 4. | Ծրագրի կատարողը | «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպություն, ՀՀ քաղաք Գյումրի, Թևոսյան 1ա, ՀՎՀՀ- 05512969 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի<br>կրթության և սոցիալական ապահովման բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 150 000 000 դրամ<br>Ալին Գայաեան՝<br>- 27 900 000 դրամ- 24.09.2007թ.<br>- 23 250 000 դրամ/ - 2008թ.<br>Ջաքուես Մաթոսյան՝<br>- 2 790 000դրամ - 2007թ նոյեմբեր<br>- 96 060 000դրամ/ - 2008-2009թթ ընթացքում:<br><br>Շինարարական հրապարակի պատրաստում, կոմունիկացիոն ցանցի ստեղծում, 2360 քառ.մ երկհարկանի կիսակառույցի, 1205 քառ.մ կիսանկուղի շինարարական աշխատանքների ավարտում, կաթսայատան կառուցում, տարածքի բարեկարգում – 140 000 000 դրամ, հեղինակային և տեխնիկական հսկողություն - [illegible] |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրի քաղաքի [illegible] շուրջ 2000 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2007թ. նոյեմբերից մինչև 2009թ. դեկտեմբեր |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2007թ. -շինարարական հրապարակի պատրաստում, կոմունիկացիոն ցանցի ստեղծում, առաջին մասնաշենքի տանիքածածկում և պատուհանների տեղադրում,<br>2008թ. I և II եռամսյակ- 600 քառ.մ երկհարկանի կիսակառույցի շինարարական աշխատանքների ավարտում և կահավորում,<br>2008թ. III և IV եռամսյակ 760 քառ.մ երկհարկանի կիսակառույցի շինարարական աշխատանքների ավարտում և կահավորում, կաթսայատան կառուցում,<br>2009թ. I և II եռամսյակ – 800 քառ.մ երկհարկանի կիսակառույցի շինարարական աշխատանքների ավարտում և կահավորում,<br>2009թ. III և IV եռամսյակ – 1205 քառ.մ կիսանկուղի, շինարարական աշխատանքների ավարտում, 6020 քառ.մ տարածքի բարեկարգում:<br>Հեղինակային և տեխնիկական հսկողություն շինարարական աշխատանքների ընթացքում: |
| 10. | Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2360 քառ.մ երկհարկանի կիսակառույցի և 1205 քառ.մ կիսանկուղի շինարարական աշխատանքների ավարտում և կահավորում, 6020 քառ.մ տարածքի բարեկարգում, հեղինակային և տեխնիկական հսկողություն՝ նախատեսվում է 150 000 000դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան, հասարակական կազմակերպություններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու բարերարների կողմից, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացվելու են հաշվետվություններ: |

«Ընտանիք» ԲՀԿ Նախագահ՝ Քնարիկ Ահարոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 հուլիսի 2009 թվականի N Մ-458-Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-905-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահի 2009 թվականի հուլիսի 6-ի N 08 գրությունը, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-905-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ և 8-րդ կետերում «2009 թվականի դեկտեմբեր» բառերը փոխարինել «2011 թվականի դեկտեմբեր» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**
**հոկտեմբերի 2010 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ի N Մ-841-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի -ի N եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 5/17-420 գրությունը, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի «Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-841-Ա որոշմանը կից բեռի ցանկը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

*« Քանաքեռ - Զեյթուն » Բժշկական կենտրոն » ՓԲԸ*
*“Медицинский Центр Канакер – Зейтун”*
*“ Kanaker – Zeytun “ Medical Center”*

Երևան-14,Ներսիսյան 7,հեռ.28-58-09, *Ереван-14,Нерсисяна 7, тел. 28-58-09,*

N - 5/17-420
«20» 10 **2011թ.**

ԱՐ.15/7.5

ՀՀ կառավարության ԲԾՀ հանձնաժողովի
նախագահ՝
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պրն. Տեր-Սիմոնյան,*

2011թ. սեպտեմբերի 30-ի թիվ Մ- 841-Ա որոշմամբ բեռի ներմուծման ծրագիրը որակվել է բարեգործական:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ « ազատ շրջանառության մաքսային ռեժիմ » ձևակերպելու ժամանակ հայտնաբերվել են անճշտություններ / բռոկերի սխալի պատճառով /:

Խնդրում ենք վերոհիշյալ որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ: Կից ներկայացնում ենք բեռի լրամշակված ցանկը:

Տնօրեն Գ.Սառաֆբուլյան

ԱՐ.15/7.5

| Հ/Հ | Անվանումը | Քանակ /հատ/ | Տեղ | Քաշ, բրուտո /կգ/ | Քաշ նետո /կգ/ | Արժեք /ԱՄՆ $/ | ծագ. երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քայլակ | 116 | 5 | 987 | 800 | 5300 | Չին. |
| 2 | Հենակ | 45 | 1 | 124 | 100 | 1016 | Չին. |
| 3 | Աթոռ պլաստ. | 1 | 1 | 5 | 4 | 40 | ԱՄՆ |
| 4 | Կշեռք Denento | 5 | | 47 | 45 | 500 | ԱՄՆ |
| 5 | Կոմպրեսոր PN-15 | 1 | | 15 | 15 | 60 | ԱՄՆ |
| 6 | Սպիտակեղեն օգտագործ. | 750 | 1 | 274 | 206 | 4300 | ԱՄՆ |
| 7 | Ներարկիչ | 20212 | 1 | 226 | 200 | 7000 | Չին. |
| 8 | Տակդիրներ | 670 | 1 | 230 | 115 | 1086 | Չին. |
| 9 | Կատետրներ | 960 | 2 | 350 | 320 | 13000 | Չին. |
| 10 | Օրթոպեդիկ պարագաներ | 164 | 3 | 450 | 430 | 5640 | ԱՄՆ |
| 11 | Անձեռոցիկ | 22180 | 1 | 183 | 158 | 12719 | ԱՄՆ |
| 12 | Բժշկ. անալիզի տարաներ | 400 | 1 | 150 | 135 | 1821 | Չին. |
| 13 | Կեղտընդունիչներ /գիշերանոթ / | 75 | | 30 | 20 | 50 | Չին. |
| 14 | Խնամքի պարագաների հավ. առաջին օգնություն | 383 | 2 | 330 | 307 | 5000 | ԱՄՆ |
| 15 | Միանգամյա ծածկոց թղթե | 1000 | 1 | 140 | 120 | 2919 | ԱՄՆ |
| 16 | Ներարկիչներ 30մլ. | 450 | | 17 | 14 | 400 | Չին. |
| 17 | Նորածնի թևնոց | 200 | | 5 | 5 | 108 | Չին. |
| 18 | Կատետրների հավաքածու | 91 | | 13 | 9 | 600 | Չին. |
| 19 | Պլաստմասե դույլ | 20 | | 12 | 10 | 81 | ԱՄՆ |
| 20 | Թաց անձեռոցիկ | 7 | | 5 | 3 | 70 | ԱՄՆ |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 20 | 3593 | 3016 | 61710 | |



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի Ն Մ - 841 - Ա**
**քաղ. Երևան**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84590-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՀՔ/22/8502-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/6543 և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 02/10-34566 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (20 տեղ, 3593 կգ ընդհանուր քաշով, 61710 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6945 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՓՍ-2011/33/35114 ներմուծված ապրանքների ցանկ

| ՀՀ | Անվանում | քանակ /հատ/ | տեղ | քաշ բրուտտո /կգ/ | քաշ նետտո /կգ/ | արժեք /ԱՄՆ $/ | ծագ. երկիր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Քայլակ | 116 | 5 | 987 | 800 | 5300 | Չին. |
| 2 | Հենակ | 45 | 1 | 124 | 100 | 1016 | Չին. |
| 3 | Աթոռ պլաստ | 1 | 1 | 5 | 4 | 40 | ԱՄՆ |
| 4 | Կշեռք Denento | 5 | | 47 | 45 | 500 | ԱՄՆ |
| 5 | ԿոմպրեսորPN -15 | 1 | | 15 | 15 | 60 | ԱՄՆ |
| 6 | Սպիտակեղեն օգտ.գուլպա | 750 | 1 | 224 | 198 | 4300 | ԱՄՆ |
| 7 | Ներարկիչ | 20 212 | 1 | 226 | 200 | 7000 | Չին |
| 8 | Տակդիրներ | 670 | 1 | 230 | 115 | 1086 | Չին. |
| 9 | Կատետրներ | 960 | 2 | 350 | 320 | 13000 | Չին. |
| 10 | Օրթոպեդիկ պարագաներ | 164 | 3 | 450 | 430 | 5640 | ԱՄՆ |
| 11 | Անձեռոցիկ | 22180 | 1 | 183 | 158 | 12719 | ԱՄՆ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Բժշկ.անալիզի տարաներ | 400 | 1 | 150 | 135 | 1821 | Չին. |
| 13 | Կեղտընդունիչներ /գիշերանոթ/ | 75 | | 30 | 20 | 50 | Չին. |
| 14 | Խնամքի պարագաների հավ. առաջին օգնություն | 383 | 2 | 330 | 307 | 5000 | ԱՄՆ |
| 15 | Միանգամյա ծածկոցներ թղթ | 1000 | 1 | 140 | 120 | 2919 | ԱՄՆ |
| 16 | Ներարկիչներ 30մլ | 450 | | 17 | 14 | 400 | Չին. |
| 17 | Նորածնի թևնոց | 200 | | 55 | 5 | 108 | Չին |
| 18 | Կատետրների հավաքածու | 91 | | 13 | 9 | 600 | Չին |
| 19 | Բոբրովի ապար.դույլ | 20 | | 12 | 10 | 81 | ԱՄՆ |
| 20 | Թաց անձեռոցիկ | 7 | | 5 | 3 | 70 | ԱՄՆ |
| 21 | | | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 20 | 3593 | 3016 | 61710 | |

"Քանաքեռ-Զեյթուն" ԲԿ.ՓԲԸ

Տնօրեն Գ.Գ.Ստամբուլցյան

Հ. 15/7.5